ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

«29» հունվարի 2020 թվականի N 01-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑՆԵԼՈՒ, 2019 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ և 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՀԱՆՁԱՐԱՐԱԿԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ և 5-րդ կետերը, 11-րդ կետի 3-րդ մասը Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ ՀՀ ԱԱՏՄ) կառավարման խորհուրդը որոշում է.

1) հավանության արժանացնել ՀՀ ԱԱՏՄ 2019 թվականի տարեկան հաշվետվության նախագիծը.

2) հաստատել ՀՀ ԱԱՏՄ-ի 2019 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների գործունեության կատարողականների գնահատումները,

3) ՀՀ ԱԱՏՄ-ի ղեկավարին հանձնարարել՝ ընդունել ի գիտություն ՀՀ ԱԱՏՄ-ի որակի ապահովման վարչության 2019 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվությունները, առաջարկությունները և ձեռնարկել համապատասխան միջոցներ դրանք ապահովելու համար:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360